ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 104 -Ա

«14» դեկտեմբերի 2021 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-028-0001-0023 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ << ԱՐՓԻ ԼԻՃ >> ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով,որ ինքնակամ շինությունն իրականացրած Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս շրջակա միջավայրի նախարարության << ԱՐՓԻ ԼԻՃ >> ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ >> պետական ոչ առևտրային կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 17-ի թիվ Դ-1082 դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարվող 626,67 քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական նպատակային նշանակության և 232,31 քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նպատակային նշանակության շենքեր,շինությունները,ինչպես նաև դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող 08-028-0001-0023 կադաստրային ծածկագրով 0.29298 հեկտար մակերեսով բնակավայրերի հողերի նպատակային նշանակության,հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը,Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայր Պաղակն 4-րդ փողոց 11 հասցեում գտնվող 626,67 քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական նպատակային նշանակության և 232,31

քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրական նպատակային նշանակության շենքեր, շինությունները 2783721 (երկու միլիոն յոթ հարյուր ութանասուն երեք հազար յոթ հարյուր քսան մեկ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած Հայաստանի Հանրապետության ի դեմս Շրջակա միջավայրի նախարարության <<ԱՐՓԻ ԼԻՃ >> ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ >> պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայր Պաղակն 4-րդ փողոց 11 հասցեում գտնվող 2929.8 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը 494662 (չորս հարյուր իննսուն չորս հազար վեց հարյուր վացուն երկու) Հայաստանի Հանրապետության դրամով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Հայաստանի Հանրապետության ի դեմս Շրջակա միջավայրի նախարարության << ԱՐՓԻ ԼԻՃ >> ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության << ԱՐՓԻ ԼԻՃ >> ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ >> պետական ոչ առևտրային կազմակերպությունը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Առուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության << ԱՐՓԻ ԼԻՃ>> ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ >> պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 9 *Դեմ՝ 0* *Ձեռնպահ՝ 0*

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Ախցխեցյան Է.
Վարդանյան Ա.
Զաքարյան Հ.
Աբրահամյան Ն.
Հարությունյան Վ.
Արսենյան Ջ.
Գևորգյան Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«14» դեկտեմբերի 2022 թվականի
գյուղ Ամասիա